ՀԱՅՈՐԴՈՒԹՅԱՆ

ԹԱՔԼԻՀԱԾ ԿՈՂՍԸ

ԳՈՌ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅՈՐԴՈՒԹՅԱՆ ԹԱՔԵՆԻՎԱԾ ԿՈՂՄԸ

181 էջ քո ապագայի մասին

2-րդ հրատարակություն
Լրամշակված, վերախմբագրված
և թարմացված տվյալներով

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.3
Կ 294

Կարապետյան Գոռ
Կ 294 Հաջողության թաքնված կողմը / Գ. Կարապետյան.- 2-րդ վերախմբագրված և լրամշակված հրատարակություն.- Եր.: Newmag, 2024.- 188 էջ:

Չկանգնել, չճահճանալ, սահմանել հստակ նպատակներ և իրագործել դրանք. ահա այն առաջնահերթությունները, որոնք շեշտված են այս գրքում: Այս խորհրդատվական ձեռնարկը հիմնված է իրական մարդու իրական ապրումների ու փորձի վրա:
Գիրքը յուրօրինակ բանաձև է՝ քայլերի հստակ հաջորդականությամբ: Այն չի պարտադրում, չի հոգնեցնում, այլ առանց շտապելու, միաժամանակ հետ չընկնելով՝ նշում է ճանապարհը դեպի սեփական բարեհարմարություն: Գիրքը նպատակային ուղեցույց է երիտասարդների համար, որ համարձակորեն ստանձնեն հաջողակ լինելու և այլոց հաջողակ դարձնելու պատասխանատվությունը:
Քո ընտրությունը շատ տեղին և ժամանակին է, մնում է միայն ճիշտ օգտագործել քեզ տրված տեղն ու ժամանակը՝ հայտնաբերելու և բացահայտելու համար հաջողության հասնելու հենց քեզ բաժին ընկած արահետը:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.3

Գրքի գլխավոր գործընկեր՝
ԹԱՐԳԵԹԻՆԳ ընկերություն
targeting.am

ISBN 978-9939-967-25-7
Գոռ Կարապետյան, «Հաջողության թաքնված կողմը»© 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի ընկերության հետ կնքած պայմանագրով:

Նվիրում եմ ծնողներիս՝
Լյուդվիգ Կարապետյանին և Ասպղիկ Մուրադյանին՝
իրենց անմնացորդ նվիրման և իմ կյանքում
իրենց անուրանալի ավանդի համար:

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ

«Հաջողության թաքնված կողմը» գիրքը երկու նոր նախագծի մեկնարկ է տվել, բայց մինչև դրանց անդրադառնալը նախ մի փոքր խոսեմ հենց գրքի անցած ճանապարհի մասին:

Գրքի առաջին հրատարակության շուրջ ծավալվող իրադարձություններն ու գրանցած արդյունքներն իսկապես հետաքրքիր են: Հրատարակումից հետո շնորհանդեսներ և հանդիպումներ ու հրավերներ եմ ունեցել Հայաստանում, Ջավախքում, Արցախում: Գիրքը հայտնվել է հարցազրույցներում, փոդքասթներում և մամուլի հրապարակումներում:

Գրքում արծարծվող թեմաներով անցկացվել են թրեյնինգներ (թայմ մենեջմենթ, փափուկ և կոշտ հմտությունների զարգացում, մասնագիտական կողմնորոշում, նեթվորքինգ, առաջնորդություն): Գիրքն ինքնին երկար ճանապարհ է անցել՝ ծրագրավորման ընկերությունից մինչև զորամաս, կանանց բիզնես ակումբ և դպրոցներ, քոլեջներ ու համալսարաններ:

Իսկ հիմա խոստացված երկու նախագծերի մասին:

1. **«Հաջողության ճանապարհին»** փոդքասթը ոչ ֆորմալ ու անմիջական զրույցների շարք է՝ կարևոր թեմաներով:

2. Հմտությունների զարգացման **«Հաջողության ակադեմիա»** ծրագրի նպատակն է բացահայտել և ուղղորդել երիտասարդների ներուժը, օգնել զարգացնել փափուկ և կոշտ հմտությունները, նպաստել արժեքավոր կապերի ձևավորմանը, նպատակների սահմանմանը, մասնագիտական կողմնորոշմանը:

ԿԱՐԾԻՔ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Մ՝ի շնչով ընթերցվող գիրք-զրույց. ասես կյանքի խորհուրդ լինի՝ իմաստությամբ և կյանքի ընտրությունների կարևորության ուղղորդմամբ, օր առաջ ասված հետաքրքիր ու կլանող մտորումներով:

Ժամանակի հետ, երբ կուտակվում է փորձը, միակ իրատեսական, արդար և օբյեկտիվ ցանկությունը դառնում է այդ ճանապարհին սայթաքումներից քաղած դասերի մասին պատմելը, նախազգուշացնելը և դեպի մտածված լուծում տանելը:

Մեզ հանդիպող խոչընդոտները նոր չեն: Օրինակ՝ անձնական անվստահության և վախի տիրույթում ընկած խնդիրները շատ հաճախ տիպային են, և այս ամենի մասին զրուցելը գնահատելի ու արժեքավոր է: Դեպի անցյալ նայելիս մենք հաճախ վիատվում ենք, որովհետև ենթագիտակցաբար խուսափում ենք մեր սխալ քայլերից կամ որոշումներից: Այս գիրքը մեզ տալիս է անսպասելի ու գնահատելի առավելություն. անցյալի դասերը ճիշտ փաթեթավորել և կիրառել հաջորդ իսկ քայլում՝ երեկվա օրից դեպի վաղվա օրը:

Գիրքը մեկնարկային կետ է դեպի ապագա և օգնում է որոշումներ կայացնել այնպիսի դեղատոմսերով, որոնք կբուժեն ընթերցողին:

Արփի Կարապետյան

Հայաստանի մարդկային ռեսուրսների ասոցիացիայի նախագահ

Բովանդակություն

Նախաբան 13

Գլուխ 1 Հաջողության այբբերգը 23

Գլուխ 2 Հաջողության հիմքերը 29

Գլուխ 3 Հաջողության սկզբունքները 39

Գլուխ 4 Հաջողության սովորությունները 45

Գլուխ 5 Հաջողության հմտությունները 51

Գլուխ 6 Հաջողության հնարավորությունները 65

Գլուխ 7 Հաջողության գրադարանը 72

Գլուխ 8 Հաջողության նեթվորքը 78

Գլուխ 9 Հաջողության գործիքները 86

Գլուխ 10 Հաջողության մասնագիտությունը 90

Գլուխ 11 Հաջողության ժամանակը 99

Գլուխ 12 Հաջողության որոշումը 112

Գլուխ 13 Հաջողության ձախողումը 118

Գլուխ 14 Հաջողության համակարգը 123

Գլուխ 15 Հաջողության առաջարկ 128

Գլուխ 16 Հաջողության պատմություններ 130

Գլուխ 17 Հաջողության առաքելությունը 141

Գլուխ 18 Հաջողության աստիճանը 147

Հավելված 1 | Հաջողության 18 օրվա ծրագիր 159

Հավելված 2 | Հաջողության խորհուրդներ 173

Հավելված 3 | Հաջողության պայմանագիր 186

ՆԱԽԱԲԱՆ

Նոր պատրաստած մատիտը տուփը դնելուց առաջ վարպետը նրան ասաց. «Քեզ կուղարկեմ աշխարհ: Եթե միշտ հիշես հետևյալը, կդառնաս աշխարհի լավագույն մատիտը:

Դու պետք է իմանաս հինգ բան.

Առաջին. դու մեծ բաներ կարող ես անել, եթե միայն ինչ-որ մեկին թույլ տաս իր ձեռքում պահել քեզ:

Երկրորդ. ժամանակ առ ժամանակ քեզ կսրեն, ու դու անասելի ցավ կզգաս, բայց դա անհրաժեշտ է, որ ավելի լավ մատիտ դառնաս:

Երրորդ. դու կարող ես ուղղել քո թույլ տված բոլոր սխալները:

Չորրորդ. քո ամենաարժեքավոր մասը միշտ կլինի քո ներսում:

Հինգերորդ. ինչ վիճակում էլ լինես, շարունակիր գրել: Հիշի՛ր՝ որքան էլ դա դժվար լինի, պետք է հստակ ու ընթեռնելի հետք թողնես»:

Մատիտը հասկացավ: Նա խոստացավ հիշել այս ամենն ու մտավ տուփ՝ լիովին հասկանալով իրեն Ստեղծողի նպատակը:

Մատիտի առակի պես ես էլ ունեմ մի քանի սկզբունքներ, մտքեր, գործիքներ ու հնարքներ: Դրանք իմ անդավաճան ընկերներն են եղել այս խենթ ճամփորդության ընթացքում, որը կոչվում է կարիերա:

Դրանք միշտ ինձ հետ են եղել և՛ ձանձրալի թվացող լսարանում, և՛ վտանգավոր խրամատում, և՛ մրցակցային աշխատա-

վայրում, և բիզնեսի անզիջում աշխարհում: Բոլոր այս փուլերում նրանք պարզապես շարունակել են համառորեն առաջ մղել ինձ:

Ահա այս մասին էլ զրուցելու ենք այս գրքում, բայց նախքան դա, որպեսզի ավելի մտերմանանք, կպատմեմ երեք պատմություն՝ իմ կյանքի տարբեր փուլերի մասին:

ԵՐԵՔ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵԿ ԲԱՆԻ ՄԱՍԻՆ

ՍՕԼ.1 | ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

— Ժողիմ ես սովորում:

— Չէ՛, գնում-գալիս եմ:

Ժամանակին (այդ տարիները ես կոչում եմ «դինոզավրերի ժամանակ») այսպես էին կատակում ԵՊՏՀ (այժմ՝ ՀՊՏՀ) ուսանողների մասին:

«Մեր բուհի լավագույն շրջանավարտները միջազգային մակարդակով 15-տոկոսանոց մասնագետ են»,- 2001 թվականի սեպտեմբերին՝ առաջինկուրսեցիների հետ հանդիպման ժամանակ, հայտարարեց Պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորը: Համաձայնիր՝ սա առաջինկուրսեցու համար մոտիվացիայի ուղիղ հակադիր կողմն էր:

Այդ ժամանակ շատ լուրջ ու խորքային պատկերացում չունեի իմ ապագայի և մասնագիտական կողմնորոշման մասին: Այդ շրջանում բուհերն ավելի շատ բարձրագույն կրթություն ունենալու հոգեբանական կարգավիճակ ու դիպլոմներ էին բաժանում, քան արդիական գիտելիքներ (հիմա շատ բան է փոխվել մեր կրթական համակարգում. ՀՊՏՀ-ում կրթությունը շատ ավելի է արդիականացվել):

Բուհն ընտրել էին ծնողներս: Ես իրավաբանությունն ու լրագրությունն էի նախընտրում, բայց նրանք այդպես էլ ոչինչ չիմացան իմ մղումների մասին:

Չեմ բողոքում: Հակառակը. անկախության առաջին տասնամյակին բնորոշ բոլոր բարդությունների գնով, հաճախ՝

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark